

ցէք և դարձարուք ի ջնջել զմեզս ձեր, որպէս զի եկեացեն ժամանակք հանգստեան յերևաց Տեառն, ահա առաքելական եկեղեցւոյ թողութեան վճիռն ու յուսատու զաղափարը:

Հարկաւ եթէ մենք Քրիստոսի ենք վերադրում այն ամէնք, ինչ որ Մորա անունը կրող աշխարհը գործում է, և պատրաստ ենք երես թեքելու Մորանից, երբ այդ աշխարհը չէ տալիս մեր ցանկացած հանգիստն ու փառաւորութիւնը՝ աւաղելի ենք քան զբազումս, արհամարհանաց ու կործանման արժանի. սուտ էր, կնշանակէ, մեր պարծանքն ու երգումը Քրիստոսի անունով, անհիմն մեր գիտումը քրիստոնեայ եղբայրներին: Փրկչի մխիթարութիւնն այդպիսիների համար չէ: Արբ նա իւր քաղցր լուծն ու փորձողի ընդ աշխարհի վերայ դրաւ հրաւիրելով Իրենից հեղութիւն ու խոնարհութիւն սովորել՝ գիտէր, որ այդ խոնարհութիւնը մինչև խաչ ու մինչև մահ տանել կարող է. գիտէր, որ այդպիսի խոնարհութեամբ միայն կրկին բարձրանալ, փառք ու հանգիստ ժառանգել կարելի է: Այլ այդ երկնաւոր գիտութեամբն է, որ անցեալ արիւնալից տարուայ փորձը մեզ համար հասկանալի և խրատական է դառնում. այդ յաւիտենական ճշմարտութիւնն է դարձեալ, որ քարոզելով երկնքից երկիր է իջնում Մատուոյ Միածին Որդին և մի նոր տարեշրջան սկսում. իջնում է նա աղքատութեան և խոնարհութեան մտւորը և սովորեցնում թշուառութեան ու հալածանքի մէջ անկումն չտեսնել, դուրսն՝ աշխարհի մեծերի մօտ հանգիստ ու փառք չորոնել, այլ զօրանալ ի ներքուստ, զարգանալ հոգւով և իմաստութեամբ, աստուածային շնորհացն ապաւինել ու հաւատալ, որ այդ շնորհաց լուսով առկայծող պատրոյզն երբէք չի շիջանի և ոչ այդ շնորհօք հաստատուն եղէ՞ղը կրեկանի: Այս հրաւիրում է բոլորին, որոնք իրենց հաշիւը հնի հետ տեսնել և նոր կեանք սկսել պատրաստ են: Առէք զլուծ իմ և ուսարուք յինէն՝ զի հեղ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց...:

Կ. Վ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

• Խրաքանչիւր որ ի ծննդ աւէ. ես Պաւղոսեան եմ, եւ միան՝ եթէ ես ապաւղոսեան, եւ միան՝ եթէ ես Կեփայեան, եւ միան՝ եթէ ես քրիստոսեան: Ա. Կորնթ. 1, 12.

Կուսակցութիւն ասածդ ես տանել չեմ կարող, և ասեմ ինչու. Լիտորէի բառարանի մէջ կուսակցութիւն կոչուում է «որոշ թուով անձանց խմբակցութիւնը» — և — — — որոնք ուրիշ շահ և տարբեր կարծիքներ ունին: Աւելի բացատրութիւն պէտք չէ. ընդգծուած խօսքերը բաւական են:

Համախմբուիլ աշխարհի մէջ մի պտղաբեր գաղափար տարածելու, կեանքի անհարթութիւնները վերացնելու և թշուառներին օգնութիւն հասցնելու համար — այդ ես հասկանում եմ: Ուղիղ է, որ դա առանց կռուի չի անցնի. Կեքը Փրկչին այդ լաւ գիտէր և տեղի չտուաւ. իրագործելով ինչ որ մարգարէութեանց մէջ ծրագրած էր, չթուլանալով և ոչ մի քայլ չը շեղուելով ճանապարհից՝ մինչև որ արդարութիւնը հաստատուի աշխարհիս վերայ:

Միանալ մի գործի հետ, որին ծառայել ես կամենում մարդոց հետ, որոնց ուղղել և ազատել պէտք է, և ամեն վիշտ յանձն առնելով կռուի մէջ մտնել, որ յաջողութեան անհրաժեշտ պայմանն է՝ բարի է այդ և գեղեցիկ, Ուրիշ է սակայն, և ոչ գեղեցիկ, անձնաւորութիւնների դէմ, քրիստոնեայ եղբայրների դէմ միանալ:

Կուսակցութիւններ ես չեմ սիրում այլ և նորա համար, որ նոքա գրեթէ միշտ կուսակցական ոգի են սնուցանում: Իսկ ուր կուսակցական ոգի կայ, այնտեղ հալածուած է և սերը և արդարութիւնը: Սէրը՝ այդ պարզ է. Արդեօք անցնում է բոպէ, որ մենք մեր վէճերի մէջ նորա սրբութիւնը չարատաւորենք ծաղրական, վիրաւորական խօսքերով, մեղադրանքներով, աննպաստ կարծիքներով, նուաստացուցիչ քննադատութեամբ, Բայց աւելի լաւ է չբխօսենք այդ մասին. Այնպիսի վէրքեր են դոքա, որոնց մասին խօսել չէ կարելի առանց լեզուի մէջ դառնութիւն խառնելու, ասել է թէ աւելի մեծացնելու այն չարիքները, որոնց դէմ բողոքել ենք կամենում:

Այո՛, արդարութիւնն էլ զրկանքներ է կրում կուսակցական ոգուց. Առնենք մի մարդ, որ եռանդուն և վճռական կերպով կարծիք է յայտնել վիճելի խնդիրների մասին: Միայն նորա մտքերը չեն իրարից խիստ տարբեր քննադատութեանց ենթարկուում՝ այդ քնական կը լինէր, այլ նաև նորա միտումները, որտեղ արդէն շատ հեշտ է արդարու-

Թեան սահմանից դուրս ելնել, նորա եռանդն ու վճռականութիւնը հակառակորդների համար յանդգնութիւն են, և թէ երիտասարդ է նա՝ մեծամրտութիւն, մինչդեռ կողմնակիցները նոյն բանը հաստատականութիւն են անուանում կամ ծաղիկ հասակի մէջ դնահատելի մի առաքինութիւն:

Ապա ես չեմ սիրում կուսակցութիւնները նորա համար, որ նոքա շատ յաճախ միջոց են տալիս մտքի ծուլութիւնը զարգացնելու:

2է՞ որ հանգիստ բան է առաջ ու առաջ իմանալ, թէ ինչպէս պէտք է վերաբերուել դէպի որ և է անձ կամ գաղափար, ծախսակը գրած ամէնքի վերայ կախած է, կարգա՞ ու կը տեսնես, Եւ որպէս զի ամեն մարդու համար ամեն դէպքում դիւրութիւն լինի, որոշ կարգերի ներքոյ են գրուում նաև նոքա, որոնց ցանկութեան հակառակ է այդ և որոնք ամենեւին յոռն չեն առնում իրենց վերադրած սկզբունքները, Եւ ահա այնուհետև առանց շփոթուելու կարելի է՝ վիճիւններ դնել, յայտնի է առաջուց, թէ ամեն մէկը որ կարգին է պատկանում, ոչ քննել և ոչ երկար ու բարակ մտածել պէտք է:

Այսպիսով բացատրուում է նաև այն տարօրինակ երևոյթը, որ կուսակցական վեճերի մէջ գաղափարների զարմանալի թիւերիմացութիւն է նկատուում՝ այնպիսի մարդոց կողմից, որոնց ազնուութիւնը քնու կասկածի չի ենթարկուում: Դեռնք, դուք շատ պարզ կերպով յայտնել էք ձեր միտքը մի լուրջ բանի մասին, բայց ահա գալիս է մի քննադատ, որ բոլորովին սխալ է մեկնում ձեր առաջը, Ինչիցն է այդ, շատ պարզ է, Ձեր քննադատը գլխում մի քանի պատրաստի արկղներ ունի, և նայած թէ նորա կարծիքով ձեր գրուածքի ընդհանուր ուղղութիւնը դէպի որ կողմն է հակուում, իսկոյն ևեթ զննում է մէկի կամ միւսի մէջ, Այդ րոպէից նա այլևս ոչինչ չէ լսում, ոչինչ չէ կարգում, այլ աչքի առաջ ունի միայն մի վերացական էակ՝ այն ուղղութեամբ, որ դուք ունիք նորա տեսակէտով, նա միմիայն «պահանջողական» է, «ազատամիտ» է, «ուղղափառ» է, «անկրօն» է ծանաչում՝ այն կերպարանքով, որ ինքն է պատկերացնում, այն գաղափարներով, որ ինքն է ընծայում, Եւ որովհետև նա իւր հոգու այս ստեղծուածին է լսում և ոչ թէ ձեզ, ուստի և նորան է պատասխանում և ոչ ձեզ, Եւ դարմանաք ուրեմն, որ նա իսկապէս պատասխան չէ տալիս, Երբ նա այնպիսի հայեացքներ էր ձեռք վերագրում, որոնց դուք միշտ դէմ էք եղել, կամ պարտք է համարում, Խաշտպանել ձեր դէմ սկզբունքներ, որոնք ձեր իսկ սրտին շատ մօտ են՝ մի գաղափարտէք նորա ան-

կեղծ եռանդը, այլ կուսակցական ոգին նդովելով նդովեցէք, որ նորան կաշկանդում է այդպիսի մոլորութիւններով և ապարդիւն է դարձնում գաղափարների ինքն ըստ ինքեան իրատ պտղաւետ մրցումը:

Ես ուրիշ պատճառ ունիմ կուսակցութիւններ չը սիրելու՝ այն, որ նոքա մեզ իրարից բաժանում են և բաժանելով արդելք են լինում իրարից ուսանելու, ինչպէս կարող և պարտաւոր էինք: Աստաբեայ դարգացման տէր մարդիկ ոչ մի տեղ չը կան, Այն գործը, որ եկեղեցին ու մարդկութիւնը ունին կատարելու՝ բաժանուած է անհատների վերայ, մոլորութեան և չարի դէմ կռիւ վարել, Ճշմարտութեան ու սրբութեան ոգու համար յաղթանակներ ձեռք բերել՝ միացած ջանքերով միայն կարելի է, Եւնք առանց իրար կառավարուել չենք կարող, Բաժան բաժան լինիլ և կուսակցութիւններ կազմել՝ այդ նշանակում է զրկուել փոխադարձ բարերար ազդեցութիւնից և օգնութիւնից, այնպիսի մի հարստութիւն, որպիսին է ձգտումների և հայեացքների բաղմանակութիւնը, ողորմելի աղքատութեան հետ փոխել:

Հէնց որ մէկի վերայ մի անուն են կպցնում, որոշ շրջաններ սխտում են կասկածանքով վերաբերուել դէպի նա, Շատերը, որոնց համար նորա խօսքը կրթիչ էր և կազդուրիչ, քաշուում և երես են դարձնում նորանից, Լաւ է ուրեմն, որ այդպիսի անուն ամենեւին չը լինի, որ ամեն ոք ինչքան կարող է բարիք անէ բոլորին, — Ասում են, դու այսպէս կամ այնպէս ես մտածում, սորա կամ նորա մասին համակրանք ես խօսում, ուրեմն նոքա գաղափարակից են քեզ և դու մեզանից լինել չես կարող, մինչդեռ իմ ցանկութիւնն է սոցա էլ պատկանել, ուրիշ կերպ մտածողների մօտ էլ ազատ մուտք ունենալ:

Այն երանի գոնէ քրիստոնեաները զգուշանային այսպիսի արհեստական սահմաններ գծելուց, երանի նոքա չը մոռանային, որ իսկական սահմանագիծը ոչ թէ նոցա մէջ է, որոնք այս կամ այն դրօշակի շուրջ են ժողովուում, այս կամ այն բանաձևներն են ընդունում, այլ նոցա մէջ, որոնք ճշմարտութեան գաղափարին ծառայում են կամ չեն ծառայում, սրտի մէջ սէր ունին կամ չունին, մասնակից են այն կեանքին, որի սկիզբը և վերանորոգիչ Քրիստոս է՝ կամ չեն:

Լ. Մոնո.*



* Փոխադրուած «Die christliche Welt» շարաթաթերթից, № 46, 1895: